Հայաստանի կենսաբ. հանդես, 1(62), 2010

ԲԱԿԱՅԻՆ ՍՊԱՆԴԻ ՍՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԸ

Վ.Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ա.ՅՈՒ.ԱԲՈՎՅԱՆ, Ն.Է.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի պետական ագրարային համալսարան

Մսի կոմբինատի և սպանդանոցների բացակայության հետևանքով Հայաստանում ծաղկել է բակային մորթը: Այն կատարվում է առանց մասնագետի մասնակցության, որը մեծ վտանգ է ներկայացնում վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածելու ու ազգաբնակչությանը փորձաքննություն չանցած միս և ենթամթերքներ մատուցելու ուղղությամբ: Բացի այդ, պատճառվում է նաև տնտեսական զգալի վնաս, քանի որ չեն օգտագործվում այնպիսի արժեքավոր մթերքներ, ինչպիսիք են արյունը, աղիքները, էնդոկրին և ֆերմենտատու հումքը, որոշ դեպքերում էլ մաշկը և ոսկրերը:

Տնտեսական վնաս - բակային սպանդ - սպանդային ելունք

Убой животных вне боенских предприятий наносит большой экономический ущерб народному хозяйству, так как в этом случае пропадает значительное количество ценных продуктов убоя (кровь, желудок, кишечник, кости, шкура, эндокринное и ферментативное сырье). Кроме того, при неумелой разделке туш на подворьях снижается их качество. В 90-х годах после приватизации всего поголовья сельскохозяйственных животных были ликвидированы почти все животноводческие хозяйства. Взамен этого в республике начал процветать подворный убой, который наносит колоссальный санитарный и экономический ущерб.

Экономический ущерб - дворовый убой - убойный выход

In our republic the number of cases causing diseases due to food poisoning (toxins and toxic infections) is rather big. In fact, increase in number of cases of the above mentioned diseases is noticed.

The problems in the sphere of veterinary sanitation of the republic are mainly connected with the absence of the enterprises of animal processing (meat processing and packing plant, slaughterhouse, slaughter block, etc). Therefore, in our republic animal slaugther take place in the yard and causes economic damage.

Economic damage - house yard - slaughter yield

Հայաստանի հանրապետությունում շուրջ 16 տարի չի գործում կենդանիների վերամշակման ոչ մի ձեռնարկություն, և կենդանիների սպանդը իրականացվում է միայն բակերում: Հայտնի է, որ բակային մորթը, որպես կանոն, կատարվում է առանց մասնագետի մասնակցության, ինչը մեծ վտանգ է ներկայացնում վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածելու ու ազգաբնակչությանը փորձաքննություն չանցած միս և ենթամթերքներ մատուցելու ուղղությամբ: Բացի այդ, պատճառվում է նաև տնտեսական զգալի վնաս, քանի որ չեն օգտագործվում այնպիսի արժեքավոր մթերքներ, ինչպիսիք են արյունը, աղիքները, էնդոկրին և ֆերմենտատու հումքը, որոշ դեպքերում էլ՝ մաշկը, ոսկրերը և այլն [1,2]:

Ուստի մեր առջև խնդիր դրեցինք, բացի մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հանդիսացող (զոոանտրոպոզոնոզ) հիվանդությունների մակրո-, միկրո հետազոտությունների, գնահատել նաև, թե ինչպիսի տնտեսական վնաս է պատճառում բակային սպանդը ժողտնտեսությանը, երբ սպանդի ժամանակ խոտանվում է արյունը, աղիքների չմարսված պարունակյալը, աղիները, ստամոքսը, ոսկրերը, սեռական օրգանները, շատ դեպքերում նաև կաշվեհումքը:

Նյութ և մեթոդ: Որպես հետազոտվող նմուշներ հանդիսացել են սպանդի ենթարկված և սպառման ներկայացված մսեղիքը նրան համապատասխանող ներքին օրգաններով (լյարդ, թոքեր, փայծաղ), ինչպես նաև վերջավորությունները, գլուխը, ավշային հանգույցները, ֆերմենտատիվ նյութերը, ստամոքսաղիքային ուղու չմարսված պարունակության հետ միասին: Հումքի վերաբերյալ տվյալները վերցվել են № 2 անասնաբուժական վկայականներից: Հետազոտությունները կատարվել են ՀՊԱՀ-ի անասնաբուժական սանիտարիայի, փորձաքննության և զոոհիգիենայի ամբիոնի գիտական լաբորատորիայում և Խորենացու 64 հասցեյում գտնվող ԱՍՓԼ-ում:

Արդյունքներ և քննարկում: Հայաստանում բացակայում է թեկուզ փոքր կարողության սպանդանոց, որտեղ կանցկացվի սպանդի մթերքների լրացուցիչ օրգանոլեպտիկ և մանրէաբանական զննում, կհաշվարկվի ենթամթերքների խոտանումից առաջացած տնտեսական վնասներն ու հաշվի կառնվեն էկոլոգիապես անվտանգ մթերքների ստացման խնդիրները:

Վերընշվածից ելնելով՝ հաշվետու ժամանակաշրջանում (01.10.2008-25.12.2008) բակային սպանդի է ենթարկվել և ուսումնասիրվել 46 մանր և 9 խոշոր եղջերավոր կենդանիների մսեղիք: Տնտեսական վնասը ուսումնասիրելու համար նախապես կատարել ենք կենդանիների կշռում, որից հետո հաշվարկել արժեքավոր սպանդային մթերքների տոկոսային հարաբերությունը:

Տարբեր երկրների սննդի կազմակերպությունների և ձեռնարկությունների տվյալները վկայում են, որ տնտեսական վնասը այս ուղղությամբ հավասար է գրեթե զրոյի [3]: Սակայն մեր հետազոտությունների արդյունքները ներկայացված են հակառակ պատկերով (աղ.1):

Աղյուսակ 1. Կենդանիների բակային սպանդի հետազոտման արդյունքերը

Կենդանու տեսակը	Սպանդի ենթարկված կենդանիների թիվը	Բակտերիո-սկոպիա	Քաշը, կգ		Արժեքավոր մթերքների կորուստ քաշի նկատմամբ, %			
			մինչև սպանդը (միջին)	սպանդից հետո (միջին)	Ստամոքս. աղիքային ուղի	արյուն	գլուխ	կաշվե-հումք
Մ.ե.կ	46	Կոկեր Դիպլոկոկեր	35	16-17	16	4,5	10	10
Խ.ե.կ	9	3 գլ.կենդ. մոտ հայտն. Է սալմոնե-լաներ 6 գլ. եղել են նորմալ ֆիզ.-վիճակում	195	95-100	20	5	4-5	15

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, բակային մորթը հանգեցնում է մեծ տնտեսական վնասի, քանի որ այսօր բոլոր խոտանվող ենթամթերքները և աղիքները իրենցից ներկայացնում են արժեք: Հաշվի է առնվել նաև այն, որ կենդանիների մորթից հետո կատարվել է բակտերիոսկոպիկ հետազոտություն, որի արդյունքում որոշ կենդանիների մոտ հայտնաբերվեց դիպլոկոկային սեպտիցեմիա, սալմոնելյոզ հիվանդությունները, որոնք անասնաբուժական սանիտարական փորձաքննության օրենքներից ելնելով անսահ-մանափակ սպառմանը, ենթակա չեն:

Լաբորատոր հետազոտություններից հետո անմիջապես միջոցներ են ձեռնարկվել և մսեղիքը ուղարկվել է երշիկի արտադրամաս բարձր ջերմային վերամշակման, որը ևս պահանջում է ֆինանսական ծախս:

Ամփոփելով հետազոտությունների արդյունքները՝ մենք հստակ կարող ենք ներկայացնել բակային սպանդի բացասական կողմերը.

1. վարակիչ հիվանդությունների տարածում,
2. հակասանիտարական պայմաններ,
3. սպանդի կանոնների խախտում (վատ արյունաքամություն, կենդանիների մսի որակի նվազում, կենդանիների սթրես),
4. սպանդային ելունքի կորուստ,
5. մեծ տնտեսական վնաս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Боровков М.Ф., Фролов В.П., Серко С.А.* Ветеринарно-санитарная экспертиза с основами технологии и стандартизации продуктов животноводства. “Лань”, 2007.
2. *Шур И.В.* Руководство по ветеринарно-санитарной экспертизе и гигиене переработки животных продуктов. М., 1972.
3. *Mariano Domingo.* La necropsia en el Ganado porcino diagnostico anatomopatologico y toma de muestras, Boehringer Ingelheim Espana, S.A., 2003.

Ստացվել է 01.02.2009